600.0095.16.03.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտի 2011 թվականի №95Ա
քաղ. Երևան

«ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետը և հաշվի առնելով «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության 2011 թվականի փետրվարի 11-ի №51ՍԽ և փետրվարի 24-ի №73ՍԽ գրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության և «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2010 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգի վերականգնում» վարկային ծրագրի ֆինանսավորման մասին ենթավարկային պայմանագիրը՝ Հայաստանի Հանրա-պետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության հետևյալ հիմնական միջոցների գրավադրմանը.

Հ/Հ	Հիմնական միջոցների անվանումը	Շահա-գործման հանձնելու տարեթիվը	Սկզբնա-կան արժեքը (մլն դրամ)	Հաշվեկշռայ ին արժեքը առ 2011 թվականի հունվարի 1-ը (մլն դրամ)
1	«Տաթև» ՀԷԿ-ի շենք	1970	1 020,4	334,2
2	«Շամբ» ՀԷԿ-ի շենք	1977	1 665,2	704,7
3	«Սպանդարյան» ՀԷԿ-ի շենք	1989	977,7	533,3

4	«Հեր-Հեր» ՀԷԿ-ի շենք	1998	151,4	86,1
5	Անգեղակոթ-Տոլորս թունել	1977	7 404,8	3 028,0
6	«Շամբ» ՀԷԿ-ի ճնշումային թունել	1977	11 546,9	4 801,7
7	«Սպանդարյան» ՀԷԿ-ի ճնշումային թունել	1989	6 279,2	2 904,4
8	«Տաթև» ՀԷԿ-ի թունել	1970	13 704,2	4 469,6
9	«Շամբ» ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշար	1977	4 432,9	1 609,8
10	«Սպանդարյան» ՀԷԿ-ի ճնշումային թունել	1989	3 260,6	1 737,9
11	Տոլորսի ջրամբարի պատվար	1977	3 349,5	1 279,8
12	Անգեղակոթի ջրամբարի պատվար	1977	2 023,3	820,7
13	Տաթևի ջրամբարի պատվար	1970	1 107,6	279,2
14	Սպանդարյան ջրամբարի պատվար	1989	7 764,8	3 275,7
15	Օրվա կարգավորման ջրավազան	1970	758,1	131,5
16	Վարչական շենք	1979	178,1	89,6
ԸՆԴԱՄԵՆԸ			65 624,7	26 086,2

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
16 մարտի 2011թ.
ժամը 16^{00}